

ԳԵՂԱՐՈՒԵՍՏ ՆԱԽՆԱԿԱՆ ՀՈՒՄԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

(Տես հտ. ԾԱ. յ'էջ. 480)

ա. Գլխաւոր բնադրոշմ և համառոտ պատմական քովանդակութիւն ձարտարապետութեան
Ե. դարեւ մինչև Ժ դար. — բ. Յատակաձեւ, ներքնատունը, կազմածք, որմայեցք. — գ. Սիւնը,
սիւնամոյրք. խոյակը, քակաղաղք. — զ. Կամարակապը, կամարք. — ե. Պատուհանը և դռները :

Ա. Զ և Է դարերէ մնացած ճարտարապետութեան սակաւ մնացորդքն սոսկ նշոյններ են միայն հռովմէական արուեստին. և շատ անգամ միմեանց վերայ զիգուած աւերակներ, այնպիսի հասարակ գործաւորաց ձեռքորոնք հազիւ որմաքար (moellon) և աղիւս միայն կարող են շարել : Բնաւ յատուկ բընադրոշմ մի՛ այս տաճէ շինուածքը յիրերաց չի՛ զանազաններ, և աւելի ժողովրդեան մի անկման քան եթէ սկզբնաւորութեան գաղափար կու տան մեզ : Էւ յիրաւի, փրանկներն ի՛նչ սկզբնատարերը կարող էին ձգել հռովմէա-գաղղիական ժողովրդաց մէջ : Կը տեսնեմք որ նոյն ժամանակ կղերականը կանգուն մնացած տաճարաց մէջ կը բնակին. իսկ թագաւորը՝ ջերմուկներու, պալատանց կամ հռովմէական ամարանոցներու աւերակաց մէջ : Վասն զի երբ կատաղի մրրիկն կ'անցնի և նոր երկրին մէջ նոր տեարք կը սկսին բնակութիւն հաստատել, այն ժամանակ կը շինուին նաև եկեղեցիներ կամ պալատներ, և նորէն յերևան կու գան հռովմէական նախատիպ օրինակներ, այլ միայն խոյս տալով ճարտարապետական արուեստի դժուար մասերէն : Հին տաճարն՝ միշտ իբր օրինակ կը ծառայէ եկեղեցեաց, իսկ հռովմէա-գաղղիական ամարանոցն՝ իշխանական բնակարանաց : Սուրբ Գրիգոր Տուրացի թեթեւ մի կը նշկարազրէ այս կրօնական և քաղաքական շինքերէն մի քանին :

« Սակայն բնաւ պէտք չէ կարծել, կ'ըսէ, որ շապլութեան գաղափարն վերցած ըլլայ ճարտարապետութեան վրայէն. այլ ընդ հակառակն՝ շատ անգամ արտաքուստ կոպիտ կերպով կառուցուած շէնքերն՝ իրենց ներսը ծածկուած ունին նկարներ, մարմարոններ,

և միւսիոններ » : Մի և նոյն հեղինակն խօսելով Էլբրամոն-փերրանդ եկեղեցոյն վերայ՝ որ Ե դարու մէջ շինուած էր ի ձեռն Սլըբոյն Նումիսիոսի՝ հրաշալի նկարագրութիւն մի կ'ընէ այս շէնքիս վրայ : « Սուրբ Նումիսիոս եկեղեցի մը շինել տուաւ, կ'ըսէ, որ տակաւին կանգուն կեցած է. և քաղաքին եկեղեցեաց մէջ ամենէն հնադոյնն է : Հարիւր յիսուն սաք երկայնութիւն ունի, վաթսուն լայնութիւն, և յիսուն ոտք բարձրութիւն կոնքի ներսի կողմէն մինչև յառաստաղն. առջևն կայ բոլորաձև խորան մի, և երկու կողմէն գեղեցիկ շինուածքով թեկեր կը տարածուին : Բովանդակ շէնքն խաչաձև է, քառասուն և երկու պատուհաններ ունի : Կոնքի որմերն զարդարուած են մէկմէկու յարմարցուած շատ սեւակ մարմարոններով : Բովանդակ շէնքն աւարտած է տասնութրիւ տաւարուան միջոցի մէջ » : Իւր պատմութեան ալ մասանց մէջ կը խօսի Սուրբ Գրիգոր Տուրացի նաև մի քանի իշխանական բնակարանաց վերայ, որոց արտաքին զաւթթքն ծածկուած են նկարազարդ գերաններով :

Խաչակիրներէն բուական յառաջ, այսինքն է՝ Ը դարէ սկսեալ Մարիտանացոց ձեռք պահուած և զարգացած արուեստը և դիտութիւնը յիրաւի նորանոր սկզբնատարերը են թողեր արևմտեան ճարտարապետութեան մէջ :

Բ. Եկեղեցեաց՝ հին տաճարաց նման ունեցած յատկապէս (plan)՝ Ե դարէ հետէ լատին խաչի մը ձև կ'աւուս, խորանի և կոնքի մէջտեղ գտուած ներքին կամ արտաքին երկկողմեան թեկ մը (transept) յաւելուածով : Նոյնպէս խորանի իւրաքանչիւր կողմէն քառակուսի կողմնական թեկեր կազմող շիտակ որմերն կիսաբոլոր ձև կ'աւանդեն :

Այս յեղանակիս մէջ կը գտուին նաև հրն-
գաթեւեան եկեղեցիք, ինչպէս և սակաւաթիւ
բոլորածէ կամ ութանկիւն եկեղեցիք: Յա-
ւարտ Զ դարու առ սակաւ սակաւ դասն կ'ըն-
դարձակի, և բազմաթիւ խորաններ կը բարձ-
րանան աւագ խորանի շուրջն:

Հին տաճարն իւր ընդարձակ տարածու-
թեամբքն, վերնատամբն (tribune) կամա-
կան թևերովն և առջևի դաթովն նոր օրինաց
պաշտաման յարմար էր: Սակայն, կարու-
վինգեան ժամանակաց քրիստոնէական տա-
ճարի գլխաւոր կազմածքն՝ տարբեր են քան
հին տաճարացն: Այն ժամանակ միայն խո-
րան մի չէր բաւեր, հաւատացեալները յա-
զօթս հրաւիրելու համար հարկ էր բարձրա-
ցնել նաև զանգակներով աշտարակներ
(tours): Հին տաճարի բեմն՝ եկեղեցեաց
մէջ հաւաքուած բազմաթիւ կղերականքը բո-
վանդակելու չափ ընդարձակ չէր, ուստի պէտք
էր դասը տարածուիլ նաև այն մասանց վե-
րայ՝ որոնք հռովմէական շինուածոյն մէջ ժո-
ղովրդեան համար սրբուած էին: Ինչպէս
հնթանոսաց մեհնարն՝ նոյնպէս և եկեղե-
ցին զատուած չէր, այլ իւր շուրջակայքը
կային քահանայից և կղերականաց բնակու-
թեան համար սահմանեալ շէնքեր. արտաքին
գաւիթներ, աւանդաւանք, երբեմն նաև զբա-
րոցներ, զբաւասուններ, և փոքրիկ սրահներ՝ պա-
հելու համար գանձերը, հին հրովարտակները.
սրբազան անօթները, քահանայական զգեստ-
ները, և ապաշխարողաց համար օթեաններ:
Եկեղեցին գրեթէ միշտ պատուար մ'ալ կ'ու-
նենար, որոյ ամուր դռներն գիշեր ժամանակ
կը զոցուէին: Սովորաբար եկեղեցւոյ մէջ ծա-
ռայողք կրօնաւոր կղերականներն էին, վա-
նահարց կամ առաջնորդաց իշխանութեան
ներքէ:

Ժ դարու մէջ միջին մեծութեամբ եկե-
ղեցի մը՝ կ'ունենար, ա. Արտաքին գաւիթ,
որ յար և նման էր հին տաճարաց նախագաւ-
թին. հոս կը կենային ապաշխարողք և պան-
դուխք: Բ. Սայն գաւթէս՝ որ սովորաբար
որմայեց զսակիւն մ'ունէր՝ կը մնոցուէր կոնքի
(nef) և կոմմական քնոց մէջ՝ (bas-côtes)
որ երեք դռներով ցտուէին. իսկ ցորեկ ա-
տեն առաքատներով կամ վարագոյրներով:

Միջնաբերդեան աւագանք կը գրուէին թէ կոնքի
մէջ, թէ կողմնական թևոց միոյն մէջ: Կոնքի
մէջ ազատ անցք մ'ալ թողուած էր էրկի
մարդիկը ի կանանց զատելու համար: Գ.
Կար վերնատունն, աքիոնն և քեմն՝ ուս-
կից կը կարգային առաքելական թղթերը և
աւետարանը: Դ. Ստորին դասն (bas coeuf)
որ սեփականուած էր կղերականաց համար:
Ե. Գաղտնատուն (confession) կամ ներք-
նատուն (crypte)՝ որ իւր մէջ կ'ամփոփէր
սրբոյ մի շիրիմը, որոյ վերայ կառուցուած էր
եկեղեցին. սրբարանը երևելու համար երկու
կողմանէ սանդղոց աստիճանք կը բարձրա-
նային: Զ. Առանձին զատուած էր աւագ խո-
րանն, որոյ ետեւէն կ'երևէր դահլինն (exé-
dre), ուր էր եպիսկոպոսական կամ արքայական
աթոռն. իսկ կանոնիկոսաց կամ կրօնաւորաց
նստարաններն գրուած էին յաջմէ և յահե-
կէ: Է. Երկկողմեան թևոց ծայրերն զարգա-
րուած էին երկրորդական խորաններով: Ը.
Աւանդատունն առանձին հաղորդակցութիւն
մ'ունէր վանքի և նորա յարակից մասանց
հետ: Բ. Չանգակատունք գրեթէ միշտ երկ-
կողմեան թևոց մօտ կը շինուէին. կողմնակի
թևոց վերջին փայտակերտ վերնատանց վերայ
(travée), Նոյնպէս նաև կրօնաւորք զան-
գակաց մօտ կը կենային, որպէս զի պատա-
րագի ժամանակ զանոնք զարնելու համար
չըստիպուին հաւատացելոց ամբոխին միջէն
անցնելու:

Ներքնատունք (cryptes)՝ (որ կամարաղեղ-
նային շրջանի (période ogivale) սկզբնա-
ւորութենէ ետեւ անհետացան), ի սկզբնա-
պիւննն է, Ե զարէն յառաջ ամենանեղ տա-
պանատներ (caveau) էին աւագ խորանի
ներքեւ փորուած, որոց մէջ կ'ամփոփուէին
սրբոց նշխարքն, ինչպէս վերն ալ ըսինք:
Ե զարէ մինչև յԺԲ դար անցած շրջանաց
մէջ երթալով աւելի ընդարձակեցան սրբա-
այնպէս որ մինչդեռ ի սկզբան դասին ներ-
քեւ միայն կը գրաւէին՝ յետոյ բովանդակ
եկեղեցւոյ ներքեւ գրաւեցին: Գաղղիոյ մէջ
սրբոյն Մելլոնի ներքնատունն գրեթէ այս-
պիսի շինուածոց ամենահինն ըլլալով, ահա
նորա գլխաւոր կազմածքը հակիրճ կը նկա-
րագրեմք: Նամարին կեդրոնին մէջ կայ կի-

սարքոյր ծառթեամբ զօտիէն մեծ աղեղ մի, (arc en forme de plate-bande) որ յե-
ցած է երկու քառակուսի մոյլծերու վերայ :
Որոց զապաթն շրջապատուած է ոչ թէ խո-
յակով՝ այլ քանոնով (filet) և շեղ կտրուած
ծայրով մի (moulure taillée en biseau).
Կամարն իսկ՝ որ յեցած է կեդրոնական մա-
նեկին (anneau) վերայ՝ տան շինուած մ'է :
Էջրու կամարաձև բացումքն՝ որոց թէ ձևն
և թէ զորածուծիւնն գետնադամբանաց կա-
մարները կը յիշեցնեն, իրենց մէջ կ'ամփո-
փեն Սրբոյն Մեղիոնի և Սրբոյն Վիկտորի-
կեայ շիրիմները :

Օղէանի կղերանոցին մէջ շէնքի թևոց
մին երկայնելու առթիւ սկսուած աշխատու-
թիւնն շատ հին ներքնատուն մի յերևան
հանեց. որ է վկայարան (confession) կամ
մարտիրոսարան (martyrium), կրկին զըռ-
ներով և կրկին կամարաձև պատուհաններով
բացուած որմով մի անջատուած է կիսաբոլոր
խորանէն :

Շինութեան ոճն կամ այս յեղանակիս
կազմածն ամենամեծ նմանութիւն մ'ունի
հռոմէական շինուածոց փոքրիկ կազմածին
հետ (petit appareil) : Այս յետին կազ-
մածս այսպէս կոչուած է, վասն զի փոքրիկ
տարածոցով քարերէ յորինուած է զանազան
ձևերով. որոնք և հետեւեալ անուամբ որո-
շուած են : 1. Փոքրիկ կազմած քառ յա-
տուկ խմաստիւն : (petit appareil propre-
ment dit) 2. Աղտոցիկ կազմած (opus
insertum)՝ որ անկանոն կերպով իրեաց հետ
միացած փոքրիկ քարերէ բաղկացած է : 3.
Յանցակերպ հիշտուած (opus reticulat-
um)՝ ցանցի կամ քանոնի ձևով շարուած
քարերով : 4. Փշաձև կազմած (opus spi-
catum)՝ փոքրիկ քարերով՝ որոնք միմեանց
վերայ դիպուած են փշոյ կամ պլուսի տե-
րեոց ձևով : Այլ յետոյ աւելի նախամեծար
համարուեցաւ միջին կազմածն (moyen ap-
pareil) ինչպէս նաև խառն և մեծ կազ-
մածքն (appareil mixte et grand) : —
Մի քանի եկեղեցիք բոլորովին աղիւսով շի-
նուած են՝ մանաւանդ յիտալիա. իսկ այլք
փայտաշէն են. փոքր կազմածի քարերով շի-
նուածներէն ոմանք ունին նաև երբեմն քո-

տիններ (bande) կամ աղիւսակերտ ուրիշ
զարդարանքներ : — Որմայեցք (contre-
forts) հաղուագիւտ են. և են որմէն զարս-
ցցուած քառակուսի սիւններ՝ կամ ի մի հա-
ւաքուած կիսասիւններ :

Գ. Սիւնք կը գտուին աւելի այն գաւա-
ռաց մէջ՝ ուր հռոմէական հոյակապ շէնքերն
կարող էին զանոնք տալ. մանաւանդ յիտա-
լիա և ի հարաւային Գաղղիա. հազիւ երբեք
կը գտուին նախկին դարոց մի քանի եկե-
ղեցեաց մէջ : Ասոնք երբեմն հին սեան տը-
ձև նմանութիւններ են, մանաւանդ Հարա-
ւային երկրի մէջ, իսկ ուրիշ տեղ քառա-
կուսի և հաստ մոյլծեր՝ զորս այս յեղանա-
կիս միջրէրն զուգուած կիսասիւններով ծած-
կեցին :

Այս սիւներս շատ անգամ տգիտօրէն հա-
տատուած են. իրենց բուն ուրիշ ոճով, խոյակ-
ներն տարբեր ոճով պատկուած են : Վաղեմի
ոճոյն դէպ 'ի յոսեփոյն փոխուիլն շատ շուտ
եղած է. սիւնն իսկոյն պարզ ձող մի կը
զառնայ տառնց մայրչլութեան, որ և կը
յայտնէ թէ այն ժամանակ աւելի օգտակա-
րութեան քան եթէ զարդարանաց ուշ դրուած
էր : Ահա այս կերպով կը հասնինք հռոման
նախկին յեղանակի եկեղեցեաց կոշտ և տան
սեանց : Այս յեղանակիս շէնքերուն սիւնն
գրեթէ միշտ խորիսի և խոյակ մ'ունի, իսկ
բունն բնաւ համեմատութիւն մի շունի իւր
բարձրութեան հետ, նոյնպէս խոյակին զար-
դերն շատ տգիտօրէն յորինուած են :

Հռոմէական ճարտարապետութեան խոշոր
և կարճ նեցուկք կը կոչուին սիւնաւորքք
(piliers-colonnes). յիւսիս սղբա պէտք են
իրը մոյլծեր նկատուիլ. վասն զի ոչ թէ կը-
տօրներով շինուած են՝ այլ մեծղի քարերով
կամ որմաքարով : Այս տեսակիս մէջ կը
նշմարուին բաց ի ներքնատանց մէջ գտուած
արուեստի կոշտութիւնէն՝ նաև հռոման եկե-
ղեցեաց ստորին մասերն : Սղբա խոյակի տեղ
սովորաբար մի քանի քիւրբ ունին, և փո-
խանակ խարսխի աղիւսաձև պատուանդան մի
(plinthe) :

Չկայ ինչ որ հաւատարի մերովինգեան և
կարլովինգեան ժամանակի շինուածոց սեանց
խարսխներուն կոշտութեան, թէ իբրև տեսք

և թէ իբրև տաշուածք։ Մոցա մէջ կը գըտուին նաև հոռովմէական խարխալաց մասեր, բայց այնպէս անկատար կերպով շինուած՝ որ անոնց ձևը ոահմանել կամ տեսքը նկարագրելը դրեթէ անկարելի է։ Իրենց ունեցած համեմատութիւնն սեան տրամագծին հետ բուշորովին կամայական է. երբեմն խարխալներն շատ բարձր են նկատմամբ սիւներու խեղճ տրամագծին. երբեմն սիւներն շինուած են շեղասայրէ մը, և երբեմն միմեանց վերայ զիւրուած քիւեր են։ Միով բանիւ, զժուարին պիտի լինի մեզ կատարեալ զարգափար մի տալ այս բարբարոսութեան ժամանակի խաւրովաց վերայ. վասն զի կ'երեկ թէ իւրաքանչիւր քարակոփ կամ ըստ կամա՝ և կամ հին ձևոց վրայ նաատար անդեկութիւն մ'ուներնալով դորժեր է. որովհետև մինչդեռ հոռովմէական սիւնն իւր վարի ծայրին վերայ դուրս ցցուած մաս մ'ունի. ընդ հակառակն միջին դարու սիւնն՝ (ի բաց առեալ մի քանին), բնաւ ստորև դուրս ցցուած մաս չունի, և մերկ դրուած է խարսխին վերայ։ Հին սեան մէջ՝ խարսխի վերին անոդն և բունին մէջանդ սակէ կախում ունեցող դուրս ցցուած մաս մի կայ, որ երկուքին միջանցք մ'է։

Հոռովմայեցիք իրենց անկման վերջին ժամանակաց մէջ անսովոր կերպով կը խանգարէին խոյակաց ձևերը։ Բնիական և կորնթական խոյակներէն խառնուող մի կազմեր էին՝ զոր և պատշաճ համարեցան կոչել բաղադրեալ խոյակ. բայց յիբաւի ուրիշ բան չէր՝ բայց միայն կրկին տարեբոցներէ պատարասուած տձև միութիւն մի, յիւրեաց անջատեալ։ Վաղուց հետէ Հոռովմայեցիք բաղադրեալ խոյակի մէջ մուտքեր էին ձևեր, թեւաւոր յաղթանակներ, արժիւներ. զարդերով լեցուցած էին վերնախարսխին ալ. և ճարտարապետական այս կարեւոր մասին մէջ ջանացեր էին աւելի ճոխութիւն ցուցնել քան թէ վայելուչ տեսք, զոր մանաւանդ յարդի համարէին Յոյնք։ Մերովինգեան թագաւորաց ժամանակ՝ երբ ուզեցին ի Գաղղիա նուրանոր շէնքեր կանգնել երկրին աւերակաց վերայ, նիւթերն չէին պակսիր, բայց որովհետև քանդակագործութիւնն նոյն ժամանակ կորսուած արուեստ մ'էր, ուստի նոր շինու

թեանց համար գործածեցին այն հին բեկորքը՝ զորս կարող էին գտնել։ Եւ անա մի և նոյն հոյակապ շէնքին մէջ յարմար տնայարմար գասաւորութեան տարբեր տրամագծով և բարձրութեամբ սիւներ և խոյակներ։ Նոյն իսկ Հոռովմայ հին եկեղեցիներն այդ հին բեկորներու ամբողջութիւն մ'են։ Առ հարկի եղած զարդագործութեան այս զանազան փոփոխութիւնն պատճառ եղաւ՝ որ աչքերն վարժին մի և նոյն շէնքի մէջ տեսնել տարբեր կազմութեամբ, ժամանակաւ և ոճով օտարամուտ խոյակներ։ Եւ երբ հին բեկորք սկսան պակսիլ, հարկ էր նոցա վերայ յաւելուլ նուրանոր աշխատութիւններ. և անա քանդակագործք Զ դարէ մինչև Թ դար ջանացին նրմանիլ իրենց ալաց առջև ունեցած հոռովմէական հին մնացորդներու։ Այս պայտի անվարժ ձեռք և կոշտ գործիներով եղած նմանութիւնքն, առանց ամենեւին գաղափար մ'ունենալու բաղադրութեան չափին, ուրիշ երեւոյթ մի յառաջ չբերին՝ եթէ ոչ արուեստից տձև խառնուրդներ, որոց մէջ ի դուր կը փնտռուին կանոնք և սկզբունք արուեստի։

Միով բանիւ այս յեղանակին խոյակներն այլանպակ և կոշտ ձև մ'ունին. կամ լաւ ևս ըսել՝ խառնափնդոր պարզ կոնքերէ կազմուած անզարդ բաներ են։ Բայց, հազիւ երբեք կը գտնուին նաև լաւ քանդակուած սիւներ և վայելուչ խոյակներ։

Գրբնորի մէջ Սրբոյն Լաւրենտեայ ստորեկրկնայ եկեղեցւոյն խոյակներն քրիստոնէութեան նախկին վարերը կը յիշեցնեն մեզ. քանդակեալ առարկայից մէջ կը տեսնուին՝ թէ կողոված (corbeille) զարդուց վերայ և թէ վերնախարսխաց կրկին թաշուներ, որոնք խաչի մ'առջև կեցած իրենց կըտուցով կը բռնեն արմաւենի և կամ ցորենի հասկ մի. զիմացը կան երկու գառնուկներ ծառի մը ներքև, որ և Դ դարու մէջ Հաւանայի շէնքերուն վերայ կրկնուած առարկայ մ'է. կայ նաև անօթ մի ուսկից բարունակներ դուրս կ'ելնեն. մի և նոյն առարկայք շատ անգամ կրկնուած են խոյակաց վերայ միմեաց զիմաց։

Միջին դարու առաջին ժամանակներէն բաղադր (entablement) բոլորովին անհետա

ցած էր. այլ ապա ժՁ դարու մէջ վերստին յերևան եկաւ, և խոյակն իւր վերնախարըսխին հետ կից ունէր անմիջապէս կամարաքաւանց պրուագը (archivolte): Այս ժամանակս՝ խոյակն օգտակար կարևորութիւն մի կը ստանայ. գլանաձևէն (cylindre) կողմանոցով մի (encorbellement) կ'անցնի քաւակուղւոյ. և աղեղան ատաղին վէմը իւր մէջ կ'ընդունի. այս կարևորութիւնը մինչև վերանորոգման դարը կը պահէ նա. սակայն մինչև ժՒ դար՝ աղեղան ատաղին վէմն յետոյ խոյակի վերնախարսխին վերայ, չէր կրնար զայն միշտ օգտակար ընել վերնախարսխին դուռն ցցուած մասին համար տրուած լայնութեան պատճառաւ. այլ յետոյ կողմանոցով մի կրցան զայն շահաւէտ կերպով գործածել:

Մերովինդեան և կարլովինդեան շինուածոց դուռն ցցուած անկեանց մէջ շատ անգամ տիւներ կը հաստատէին: Կարլովինդեան քանդակագործութեան մէջ ոմանք հռովմէական խոյակի տերևները փոխելով, և չգիտնալով թէ ինչպէս պէտք է տերևի հակառակ կողմը քարի մէջ հաստատել և քանալ, կը գնէին զայն կողմնակի տեսքով և իբր ծածկողովան զարդի վերայ. իսկ այլք հռովմէական տերևի շղերը և կտրուուածքը ձևացնելու համար կը շատանային հովաքարաձև քանդակուած մի քանի մասնէքներով (cannelure): Բայց երբեմն ալ այս նախկին արուեստաւորը կը ջանային հեռանալ վաղեմի աւանդութենէն. և արդէն ժ. դարէն 'ի վեր խոյակաց կողովան զարդաց վրայ կը քանդակէին ձեւեր կամ կերպարանքներ, որոց ծագումը, գծագրութիւնը, օձանէ գծերը, կոշտ նախագծերը բացատրել գոյուարին է:

Այդ այսպէս, այս յեղանակիս մէջ շատ անգամ գոտիներն (frise) և քովթարներն (architrave) զատուուած են քակաղաղի մէջ քիւերով՝ զորս կը բռնեն նեցուկներ կամ մոյթեր. նաև կամարաց աղեղնակներն շատ անգամ անմիջապէս կը հանդիպին խոյակաց վերայ: Մոյթերէն (modillon) ոմանք կը կերպարանեն իրենց վերայ գերանի մը շեղ կտրուած ծայր, և կամ զիմակներ. կան ալ որ մեծ նմանութիւն մ'ունին հռովմէական վերջին ժամանակի շինուածոց մոյթերուն:

Դ. Կամարակապք (arcades) են կիսաբոլոր կամարներ և կը ծառայեն թակաղաղ գետեղելու համար: Ասոնք կը բաժնեն զըլխաւոր թիւը կողմնական կրկին թեկերէն. և իրենց զլխաւոր զարդերն են խճախառն աղեղներ: Կամարակապք՝ որ եկեղեցւոյ գոտին և կոյրի մէջնող հաստատուած է՝ (որ և կը կոչուի յաղթական կամար), ստէպ զարդարուած է քարեղէն դրուանքներով և քիւերով:

Եկեղեցեաց ատաղձն որ վեր կը բռնէ տանիքը, շատ անգամ մերկ կը մնայ, ինչպէս էր հռովմէական տաճարաց մէջ, երբեք որ սակաւութիւնք են, միշտ փորագրեալ տախտակներով կը շինուին:

Ժ. դարու մէջ իսկ խորաններն և զանգակատան ստորին յարկերն գրեթէ միշտ կամարով ծածկուած մասունքն էին միայն. կոնքերն, կողմնական թեկերն, երկկողմեան թեւերն ծածկուած էին գերաններով: Սակայն, կրօնական շէնքերու միւս մասանց մէջ ևս արդէն կը ջանային կամարներ հաստատել. մանաւանդ այն տեղերը՝ ուր այս տեսակ շինութիւնն շատ գոյուարութիւններ չունի:

Սակայն քիչ ատենէն զոր չեն բլլար միայն եկեղեցեաց դասը, աւագ խորանի մասունքներ և իրենց յարակից մասերը կամարով ծածկելով, հապա կ'ուզեն ամէն տեղ կամ քարէ կամ որմաքարէ և կամ աղիւսէ կամարներով շինմացիւն ատաղձները հաստատել, կամ կ'այրէին. և թէպէտև ասոնք նկարուած էին՝ սակայն այն փառաւոր և տեւական երևոյթ չունէին՝ զոր միջին դարու շինողքն կը ջանային տալ եկեղեցւոյ:

Ե. Պատուահանք են կիսաբոլորակ կամարով փոքրիկ տարածութեամբ և առանց սեանց բարձրութիւնն իրենց լայնութեան կրկինն է. ասոնք երբեմն որմածակերու (meurtrière) կը նմանին: Կամարի զարդարանքներն կը կայանան կամ քարերով և աղիւսներու չափակցեալ կամ խառնաշփոթ կարգադրութեամբ և կամ այս նիւթոց խառնուրդով յառաջ եկած քանդակներով: Ասկէ զատ, երբեմն ալ որմէն դուռն ցցուած պսակ մի կը շրջապատէ պատուահանին վերին մասը: Պատուահանաց կամարն կը յենու կամ դրանցեաց վերայ, և կամ լայն և ջախջախուած չորեքկուսի սեանց վերայ:

կամ լայն և ջախջախուած չորեքկուսի սեանց վերայ :

Այս յեղանակիս հազուադիստ շէնքերուն մէջ մեր նշմարած պատուհաններն այնքան փոքր են և այնքան նեղ, որ երբեմն որմա- ծակերու կը նմանին : Շատ անգամ կը տես- նուին երկու կամ երեք տեսակ ազիւններ միմեանց հետ խառնուած, տեսակ մը կամա- բաքարանց դրուագ յօրինելով : Կամարներն բնաւ չեն հանգչած սեանց վերայ, այլ լայն և ջախջախուած չորեքկուսի միջմերու վերայ : Նախկին տաճարաց պատուհաններն լոյս կու տային բոլորչի կամ քառակուսի փոքրիկ ծակե- րէ, որոնք բացուած էին նուրբ սալաքարին (dalle) մէջ, տեսակ մը վանդակ կազմելու

ոճով, որոյ միջէն աղօտ կերպով միայն լոյսն կը թափանցէր : Թորանն բաւական ժամանակ առանց պատուհանի էր, այլ ապա բացուե- ցաւ՝ մի նաեւ սաէպ երեք պատուհան : որոց խորհրդական նշանակութիւն մի կը արուէր : Սոցա զարդերն ժ.Ա. դարու մէջտեղերն սկսան : Գռեկերն կիսաբոլոր կամարներ են. կամարն նոյն զարդերը և հաստարանները ունի՝ ինչ որ պատուհանքն : Թմբուկն շինուած է փոք- րիկ կազմածով, կամ լաւ ևս ըսել՝ զարդա- բուած է խառով կամ հարթ քանդակով մի : Դրան մուտքն թէպէտեւ կիսաբոլորակ կամա- րով մի շրջապատուած է, բայց սովորաբար քառակուսի է :

(Շարաշարեղի)

ՔՈԼՈՄԹԵԱՆ ՑՈՒՑԱՅԱՆԴԵՍ Ի ԾԻԳԱԿՕ

(Տես հտ. Տա յէջ 581)

ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՊԱՐԱՑՆ. — Կերականք կ'եփուին, սենեակներ կը հա- վահարուին, գողեր կը ձերբակալուին, գաշնա- մուրք կը նուագեն. բուսականք կ'աճին, վա- ռեակք կը թխեն, հանդերձք կը ձեւուին, ժա- մացոյցք կը շարժին, թնդանթք եւ ուսմբք կ'արձակուին ելեկտրականութեամբ, այնպիսի գողտրիկ եւ լոխի եղանակաւ մը՝ որ այս շա- ապամամբ լի ժամանակաց մէջ յոյժ նախապա- սելի է : Կան ելեկտրական սրբիչներ եւ խո- զանակներ, եւ այլ առողջապահական գործիք, որովք մեր լուաց նոր ոյժ եւ գործութիւն կրնանք հաղորդել : — Ելեկտրականութեան ապագայն այնչափ խոտմնայլից է՝ որչափ պայծառ պա- տանալ մը ապագայն. վասն զի բազմաթիւ են այն վառ եւ կարող մտքեր որ իրենց ամ- բողջ ոյժն կը թափեն գիտական սոյն մաս- նաճիւղին վրայ մեծ արդեամբ :

Անցեալներ մասնագիտաց համախմբման մէջ հետեւեալ կէտերն ի նկատի առնուեցան :

Ա. Ելեկտրականութիւն պատրաստելու ծախ- սերն նուազեցնել : Այսօր տասն քաշ քա-

րածուիէ 7 քաշն կը ծախսուի ի զուր, եւ երեք քաշի գործութիւն հազիւ ի յայտ կու գայ, այս երեքին ալ մեծ մասն կը վատուի փոխանցութեամբ : Ետիսըն կը խոտանայ շատ չանցած ի կատար հանել մի նոր զիւտ՝ որոյ ձևը պտուրուածեանց արդէն իսկ յայտնած է : Այս պիտի ըլլայ ածիայ ջերմութիւնն յեղեկ- արականութիւն փոխարկել, առանց շոգեշարժ մեքենայից միջամտութեան. այսու կը կարծէ Պ. Ետիսըն, թէ մեծ խնայողութիւն կա- ընլի պիտի ըլլայ ի գործ ածել, այսինքն թէ մէկ լիպրայ քարածխով ելեկտրական լամ- քար մը լոյս պիտի կարենայ սալ ամբողջ գի- շեր մը :

Պ. Թիլցա, Մոնթենեկրոցի երիտասարդ ելեկտրագէտն ալ, կը խոտանայ ինչպէս ար- զէն կ'ընէ, յառաջ տանիլ իւր աշխատութիւնն եւ կատարելագործել իւր ելեկտրականութիւն փոխադրող գործիներն. եւ եթէ ապագայն այնչափ պայծառ ըլլայ՝ որչափ անցեալն ար- զէն իսկ եղած է, պատճառ չունինք տարա- կուսելու, թէ քսաներորդ դարն բացարձակ ե-